ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
11.02.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 10 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Ն.Վարդանյանը, Տ.Եփրեմյանը,Ն.Բաբայանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին:
5. Քաղաքացու անվամբ գրանցված 07-019-0305-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
6. Չարենցավան համայնքի 07-007-0029-0003 ծածկագրով հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1.Զարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատվել է 2021 թվականի դեկտեմբերի 20-ին և չի արտացոլվել 2022 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները, ***առաջարկում եմ.*** Զարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ;

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 7-րդ թաղ., 3 շենքի 47 բն. բնակիչ ***Դեզդեմոնա Արտուրիկի Անդրյանի*** 2022 թվականի հունվարի 18-ի թիվ 210-16, Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ., 20 շենքի 30 բն. բնակիչ ***Դունարիկ Միխայելի Կոնջորյանի*** 2022 թվականի հունվարի 20-ի թիվ 236-16 և Չարենցավան համայնքի Կարենիս գյուղի 6 փողոցի 9 տան բնակիչ ***Ռազմիկ Ժորայի Դավթյանի*** 2022 թվականի փետրվարի 10-ի թիվ 522-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Դեզդեմոնա Արտուրիկի Անդրյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Դունարիկ Միխայելի Կոնջորյանին,***Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Ռազմիկ Ժորայի Դավթյանին:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3.Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2022 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով՝***առաջարկում եմ.*** Հաստատել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի: Հաստատել արենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2022 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:Հաստատել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման 2022 թվականի (ամենամյա) ծրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի:/ հավելվածները կցվում են/

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով .առաջարկում եմ. Թույլատրել 5 տարի ժամկետով համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Զարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 2-րդ փողոց թիվ 9 շինությունից /«Լուսաբաց» մսուր մանկապարտեզի շենք/ 128.0 քմ մակերեսով տարածք՝ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Սպիտակ Ձեռնափայտ» հասարակական կազմակերպությանը, հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացման կենտրոն ստեղծելու նպատակով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Քաղաքացու անվամբ գրանցված 07-019-0305-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով, նկատի ունենալով, որ հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ համայնքային սեփականություն հանդիսացող 07-019-0305-0002 կադաստրային ծածկագրով 0,03532 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը սխալմամբ գրանցվել է որպես քաղաքացու սեփականություն. ***առաջարկում եմ.*** Հողերի քարտեզագրման և չափագրման ժամանակ սխալմամբ որպես քաղաքացու սեփականություն գրանցված 07-019-0305-0002 կադաստրային ծածկագրով 0,03532 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը ճանաչել Չարենցավան համայնքի սեփականությունը /կից ներկայացվում է հողամասի հատակագիծը/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-10 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի 07-007-0029-0003 ծածկագրով հողատարածքի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 26.11.2006 թվականի թիվ 1725 որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի գլխավոր հատակագծի. ***առաջարկում եմ.***

Չարենցավան համայնքի 07-007-0029-0003 ծածկագրով հողատարածքի նպատակային նշանակությունը, համաձայն հաստատված գլխավոր հատակագծի, համարել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 10 դեմ-0 ձեռնպահ-0

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ